Ազգ
Azg

28 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 164(5247)

ISSN: 1829-1651

# Բարերարների ընտանիքում

Հեռուստատեսության, մամուլի ու ԶԼՄ-ների մյուս տեսակների ներկայացման ոճերից հաճախ այն տպավորությունն է ստեղծվում, որ հայրենիքը, ժողովրդին սիրում, նրա համար պայքարել ու պայքարում են միայն նրանք, ովքեր զենքը ձեռքին մարտադաշտում են կռվել: Իհարկե, նրանց կատարած գործն ամեն ինչից առավել է, մարտիկները՝ արժանի ամեն տեսակ մեծարման, սակայն կարեւոր է, որ բոլորս տեղին ու ժամանակին գնահատենք, արժանին մատուցենք նաեւ նրանց, ովքեր թեեւ զենք չեն բռնել ու չեն ապրել մահվան սարսափները, բայց ավելի նվազ չափով չեն ծառայել ու զորակցել մայր հայրենիքին: Հակառակ դեպքում, բոլոր նրանք, ովքեր այլ միջոցներով են սատարել հայրենիքին, կհայտնվեն չգնահատվածի կարգավիճակում:



Այդ կարեւոր հարցին ճիշտ լուծում տալու ուղին որդեգրած հայրենի իշխանությունները Հայաստանի անկախության 22-ամյա հոբելյանի առթիվ սեպտեմբերի 21-ին ՀՀ նախագահի հրամանով «բարերար Բաբկեն Մկրյանին (ԱՄՆ) պարգեւատրեցին «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով»: Այդ հաճելի առիթով իրենց հյուրընկալ ու արեւշատ երեւանյան հարկի տակ հանդիպեցի ընկեր Մկրյանին ու նրա կյանքի անբաժան ընկեր տիկին Անահիտին: Շնորհավորեցի: Հուզված էր: Անկեղծ, պարզ ու մաքուր տարիքն առած երեխայի էր նման: Շոյված էր իր հանդեպ ցուցաբերած ուշադրությունից: Ակամա մտածեցի, որ հաստատ ճիշտ մարդու են պարգեւատրել, որովհետեւ նա գնահատում է, շատ ուրախ է ու հպարտ: Թե չէ ոմանք համարում են, որ այդպես էլ պետք է լիներ, եւ ինչ-որ մեդալ ոչինչ է իրենց նման «մեծության» համար: Հարցրեցի՝ երկա՞ր ճանապարհ էր, դժվարություններ շա՞տ էին մինչ այս հանգրվանը:

Մի պահ մտածեց: Մանկան նման արագ-արագ թարթում էր աչքերը, ինչ-որ կարեւոր բան էր ուզում հիշել հավանաբար, կամ երեւի ինչ-որ բան ուզում էր ավելի կարեւորել:

- Հալեպում եմ ծնվել, 1939 թ. ապրիլ 15-ին: 1968-ին գաղթել եմ (մի պահ կանգ առավ ու հարցրեց ինձ՝ գաղթե՞լ եմ, թե՞ արտագաղթել, ու պատասխանի չսպասելով՝ շարունակեց) ԱՄՆ: Գնացինք Անահիտի ու 4-ամյա Կարո անդրանիկ զավակիս հետ: Գիտեմ, կմտածեք լավ կյանքի համար եմ գնացել, սակայն այդպես չէ: Բոլոր հարազատներս այնտեղ էին, գնացի, որ միանամ նրանց: Սկզբում աշխատեցի բանկում, հետո սեփական գործս ձեռնարկեցի: ԱՄՆ-ում ծնվեցին Արամս ու Թանիաս:

Տես էջ 3

# Եպիսկոպոսական ժողովը՝ եղբայրական սիրով համախմբման հնարավորություն



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սեպտեմբերի 24-27-ը Մայր աթոռում տեղի ունեցած Հայաստանյայց առաքելական եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը, որին մասնակցում էին 62 արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, օրհնությամբ եւ նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի, ավարտվել է, եպիսկոպոսաց դասը գոհունակ է ժողովի արդյունավետ ընթացքից՝ երախտագիտություն հայտնելով Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին եւ Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսին Մայր աթոռում եպիսկոպոսներին եղբայրական սիրով համախմբման հնարավորության համար: Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերները եւ հայ ժողովրդին հուզող հարցերը, դրանց առնչությամբ Հայ եկեղեցու տեսակետներն ու մոտեցումներն այսուհետեւ էլ կճշտվեն եպիսկոպոսաց ժողովների պարբերական գումարմամբ, հաջորդն արդեն իսկ նշանակված է 2014 թվականի աշնանը:

Ներկա ժողովի արդյունքները երեկ ներկայացվեցին Մայր աթոռում կայացած մամլո ասուլիսում՝ նախ **Վահրամ քահանա Մելիքյանի**՝ եպիսկոպոսական ժողովի մամլո դիվանի հաղորդագրության ընթերցմամբ, ապա եւ եպիսկոպոսական ժողովի գլխավոր օրակարգերի վերաբերյալ **Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի** ու **Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի** պարզաբանումներով:

Տես էջ 3

# Հայաստանին Վիլնյուսում թանաք հարկավոր չի լինի

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Նոյեմբերի վերջին Վիլնյուսում կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովին ընդառաջ մի այնպիսի իրավիճակ է ստեղծվել, երբ հայկական կողմը այսպես կոչված գնդակը համարում է եվրոպական դաշտում, Եվրամիության կողմից էլ սպասում են, թե ինչ կասի Հայաստանը: Ամեն դեպքում, Վիլնյուսում Հայաստանի հետ որեւէ տարբերակով որեւէ տեսակի փաստաթղթի ստորագրումը, որին գրեթե չորս տարի պատրաստվում էին Հայաստանը եւ Եվրամիությունը, նախատեսված միջոցառումների ցանկում չէ:

Տես էջ 2

# ԱՄՆ-ը եւ Եվրոպան գրոհում են Իլհամ Ալիեւի դեմ

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**ԵԱՀԿ անդամ երկրների ներկայացուցիչների հետ Վարշավայում հանդիպմանը Միացյալ Նահանգների փոխպետքարտուղարի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերով օգնական Թոմաս Մելիան անդրադարձել է Ադրբեջանում համացանցի միջոցով «զրպարտություն տարածելու համար» քրեական պատասխանատվություն սահմանելու օրենսդրական փոփոխությանը, որն ուժի մեջ է մտել 2013թ. մայիսին:**

**ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնյան հատկապես ընդգծել է «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայության աշխատակից Խադիջե Իսմայիլովայի դեմ բռնությունները: Հիշեցնենք, որ Իսմայիլովան լրագրողական հետաքննություն էր անցկացրել իշխող ընտանիքի անդամների գույքի եւ ունեցվածքի հարցով, որից հետո ադրբեջանական հատուկ ծառայությունները համացանցում տարածել էին նրա ինտիմ կյանքին վերաբերող տեսահոլովակ, ապա մտացածին մեղադրանքով դատարանը լրագրողուհուն դատապարտել էր «200 ժամվա հանրօգուտ աշխատանքի»:**

**«Նույն վիճակում են նաեւ մի քանի բլոգերներ, եւ մենք իշխանություններին (Ադրբեջանի-Վ. Ա.) հետեւողականորեն կոչ ենք անում հետաքննելու բոլոր այդ փաստերը, ինչպես նաեւ այն խոչընդոտները, որ հարուցվել են Ադրբեջանում «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակման հարցում»,- ասել է Թոմաս Մելիան: Ավելորդ չէ նկատել, որ սեպտեմբերի սկզբին ադրբեջանական կողմը հրաժարվել էր նախագահական ընտրությունների հետ կապված իրավիճակը դիտարկելու նպատակով Բաքու Թոմաս Մելիայի գլխավորած պատվիրակության այցն ընդունելուց, ինչը հարուցել էր Վաշինգտոնի դժգոհությունը:**

**Երեկ հայտնի է դարձել նաեւ, որ ԵԽԽՎ աշնանային նստաշրջանում քվեարկության կդրվի «Կոռուպցիա. սպառնալիք օրենքի գերիշխանությանը» անվանումով բանաձեւ, որի հեղինակն էստոնացի պատգամավոր Մաիլիս Ռեպսն է: «Թուրան» գործակալության Ստրասբուրգի աղբյուրների փոխանցմամբ, «բանաձեւում Ադրբեջանի մասին առկա են չափազանց սուր ձեւակերպումներ»:**

Տես էջ 2

# ՌԴ-ԱՄՆ համաձայնություն ՄԱԿ-ում սիրիական բանաձեւի առթիվ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը համաձայնության են հասել Սիրիային առնչվող բանաձեւի նախագծի առթիվ: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը՝ վկայակոչելով ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հայտարարությունը:

Բանաձեւի նախագիծը չի ենթադրում ուժի կիրառություն քիմիական զենքի օգտահանման արարողակարգերի խախտման դեպքում: Լավրովը մանրամասնել է, որ եթե տեղի ունենան խախտումներ, ապա դրանք լրացուցիչ կարգով կքննարկվեն ՄԱԿ-ի ԱԽ-ում, եւ արտաքին ռազմական միջամտության համար կպահանջվի եւս մեկ բանաձեւ:

Լավրովը նաեւ նշել է, որ բանաձեւը համագործակցության կոչ է անում ոչ միայն Բաշար Ասադի կառավարությանը, այլեւ ապստամբների խմբավորումներին:

ՌԴ արտգործնախարարը հայտնել է, որ ՄԱԿ-ի ԱԽ-ում փաստաթղթի տեքստը քննարկվում է սեպտեմբերի 27-ից:



Սեպտեմբերի սկզբներին Սիրիայի կառավարությունը համաձայնել էր միջազգային վերահսկողության ներքո լիովին ոչնչացնել երկրի քիմիական զենքի պաշարները: Դամասկոսը Մոսկվայի առաջարկած այդ քայլին դիմել էր ԱՄՆ-ի ռազմական միջամտությունից խուսափելու նպատակով: Ամերիկացիները Բաշար Ասադի վարչակարգին էին մեղադրում շուրջ 1400 զոհ պատճառած օգոստոսի 21-ի քիմիական գրոհի համար: Նախագահ Բաշար Ասադը CNN-ին տված հարցազրույցում ասել էր, թե Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման համար կպահանջվեն առնվազն 1 տարի եւ 1 մլրդ դոլար: Սակայն «Վաշինգտոն փոստ» թերթը սեպտեմբերի 27-ին, ամերիկացի եւ ռուսաստանցի մասնագետներին վկայակոչելով, գրեց, որ Դամասկոսի քիմիական զենքի պաշարները հնարավոր է ոչնչացնել 9 ամսում:

Պ. Ք.

# ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի նյույորքյան հանդիպումների օրակարգից



Սեպտեմբերի 26-ից աշխատանքային այցով Նյու Յորքում գտնվող Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի օրակարգի առաջին կեսը ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերի բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի, ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի եւ Արեւելյան գործընկերության նախաձեռնության անդամ երկրների արտգործնախարարների հանդիպմանը մասնակցությունն է եղել: Հանդիպման ընթացքում արծարծվեցին Արեւելյան գործընկերության Վիլնյուսի գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները:

Ըստ ԱԳՆ հաղորդագրության՝ Հայաստանի արտգործնախարարի եւ Շվեյցարիայի արտաքին հարաբերությունների դաշնային դեպարտամենտի ղեկավար Դիդյե Բուրխալտերի հանդիպմանը քննարկվել են 2014թ. ԵԱՀԿ-ում շվեյցարական նախագահության առաջնահերթությունները:

ՄԱԿ-ի կենտրոնակայանում Նալբանդյանը Հայաստանի անունից ստորագրել է «Միգրանտ աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան»:

Նույն օրը Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության նախագահության շրջանակներում Նյու Յորքում տեղի է ունեցել ՍԾՏՀ անդամ երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպումը, որը վարել է կազմակերպությունը նախագահող Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Հանդիպման մասնակիցները անդրադարձան նաեւ հոկտեմբերի 4-ին Երեւանում կայանալիք տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների հարցերով բարձրաստիճան հանդիպման նախապատրաստական աշխատանքներին:

Նալբանդյանը հանդիպել է նաեւ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերին, մտքեր են փոխանակել ԵԱՀԿ օրակարգային հարցերի, ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ:

Նույն օրը ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունում Նալբանդյանը հանդիպել է Վանուատուի փոխվարչապետ, արտգործնախարար Էդվարդ Նիպակե Նատապեիի հետ, ստորագրել են դիվանագիտական հարաբերությունների հաստատման համատեղ հայտարարությունը:

Կոսովոյի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Էնվեր Հոջայի հետ հանդիպմանն էլ Նալբանդյանին ներկայացվել է ԵՄ հովանու ներքո Սերբիայի հետ հաշտեցման գործընթացը: Հայաստանի ԱԳ նախարարը նշել է, որ թեեւ Հայաստանը չի ճանաչել Կոսովոն, սակայն նման կարգի հանդիպումները օգտակար են մտքերի փոխանակման համար:

Վ. Պ.

# Հայաստանին Վիլնյուսում թանաք հարկավոր չի լինի

1-ին էջից

Սեպտեմբերի 26-ին ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնն ու ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն ԵՄ-ում նախագահող Լիտվայի արտգործնախարար Լինաս Լինկեւիչիուսի հետ Նյու Յորքում հանդիպել են Արեւելյան գործընկերության երկրների ԱԳ նախարարների հետ: Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի համաձայն՝ քննարկել են Վիլնյուսի գագաթաժողովից առաջ իրավիճակը:

Այս հանդիպման մասին տեղեկացնում է նաեւ Հայաստանի արտգործնախարարությունը: Ըստ վերջինի հաղորդագրության՝ սեպտեմբերի 26-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի՝ Նյու Յորք մեկնարկած աշխատանքային այցելության ընթացքում օրակարգի առաջին կեսը Քեթրին Էշթոնի, Շտեֆան Ֆյուլեի եւ Արեւելյան գործընկերության երկրների արտգործնախարարների հանդիպմանը մասնակցությունն էր: Հանդիպման ընթացքում, ըստ Հայաստանի ԱԳ նախարարության, արծարծվել են Արեւելյան գործընկերության Վիլնյուսի գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները:

Թե Հայաստանն այդ արծարծված աշխատանքներին ինչպիսի մասնակցություն է ունենալու, դժվար է գուշակել, հատկապես որ այդ մասին մամուլի հաղորդագրության մեջ ոչ մի բառ չկա: Այդ մասին նշված չէ նաեւ Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրության մեջ, սակայն այլ երկրների պարագայում նշումների առկայությունը վկայում է, որ Հայաստանը Վիլնյուսում, գոնե այս պահի դրությամբ, անելիք չունի՝ բացի թերեւս զուտ մասնակցության ձեւաչափից:

ԵՀ կայքէջը տեղեկացնում է, որ Էշթոնն ու Ֆյուլեն իրենց գործընկերներին վստահեցրել են Արեւելյան գործընկերության համընդհանրության առնչությամբ՝ հաշվի առնելով ընդհանուր արժեքներն ու անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու գործընկեր երկրների հանձնառությունը:

«Այս ամենի կոնկրետ արտահայտությունը պետք է լինի Արեւելյան գործընկերության վիլնյուսյան գագաթաժողովը՝ Ուկրաինայի հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման եւ Վրաստանի ու Մոլդովայի հետ համաձայնագրերի նախաստորագրման հետ միասին», ասվում է եվրոպական հաղորդագրության մեջ՝ ակնհայտորեն բաց թողնելով Հայաստանի պարագան:

Էշթոնն ու Ֆյուլեն ընդգծել են նաեւ ԵՄ վճռականությունը՝ գտնելու ուղիներ մյուս գործընկերներ (մնացին Հայաստանը, Բելառուսն ու Ադրբեջանը, որոնցից վերջին երկուսի պարագայում Ասոցիացման համաձայնագրին առնչվող ոչ մի քայլ չի արվում- Վ.Պ.) երկրների հետ համագործակցության ամրապնդման համար: Եվրոպացի դիվանագետները պնդել են, որ Ասոցիացման համաձայնագրերից շահում են ոչ միայն ԵՄ հարեւանները, այլեւ հարեւանների հարեւանները, եւ որ անընդունելի են ճնշումները նրանց նկատմամբ, ովքեր ցանկանում են համաձայնագրեր ստորագրել ԵՄ-ի հետ:



# Դասախոսություն՝ Օքսֆորդի գիտաժողովում



**Քլեյ մաթեմատիկայի ինստիտուտը եւ Օքսֆորդի համալսարանը կազմակերպել էին գիտաժողով կոսմոլոգիայի հիմնարար հարցերի քննարկման նպատակով՝ մասնակցությամբ հրավիրված առաջատար մասնագետների նեղ խմբի: Հրավիրված մասնագետները՝ հարաբերականության ընդհանուր տեսության, տարրական մասնիկների տեսության եւ հարակից բնագավառներից, յուրաքանչյուրը կարդացել է մեկ ժամանոց դասախոսություն: Մասնակիցների թվում էր պրոֆ. Վահագն Գուրզադյանը (Ալիխանյանի անվ.ազգային լաբորատորիա), որի դասախոսությունը՝ «Դրական լամբդան, երկրորդ օրենքը եւ դիտումները», երկրորդն էր գիտաժողովի բացումից հետո:**

**BBC հեռուստաընկերությունը տեսագրել է հարցազրույցներ Սըր Ռոջեր Պենրոուզի (Օքսֆորդ), Գաբրիելե Վենեցիանոյի (Փարիզ) եւ Վահագն Գուրզադյանի հետ: (Կայք. http://www.claymath.org/workshops/CCC/ http://cosmo.yerphi.am /oxford/)**

# ԱՄՆ-ը եւ Եվրոպան գրոհում են Իլհամ Ալիեւի դեմ

1-ին էջից

**Այսպես, բանաձեւի հոդված 34-ը լիովին նվիրված է «գյուլարգեյթ» սկանդալային պատմությանը: Խոսքը վերաբերում է Ադրբեջանի միջազգային համալսարանի, որի գործունեությունը դադարեցված է, նախկին ռեկտոր, Ֆրանսիայում որպես քաղաքական վտարանդի բնակվող Էլշադ Աբդուլլաեւի անցյալ տարվա սեպտեմբերի 25-ին համացանցում տեղադրած հոլովակին, որը նրա եւ Միլլի մեջլիսի պատգամավոր Գյուլար Ահմեդովայի զրույցի տեսագրությունն է, ինչից պարզ է դառնում, որ Ահմեդովան Աբդուլլաեւին խոստանում է 1 մլն դոլար «փոխհատուցման» դիմաց նրան «դարձնել խորհրդարանի պատգամավոր»:**

**Նախագահական ընտրություններից մի քանի օր առաջ ԵԽԽՎ-ում այսպիսի ձեւակերպումներով բանաձեւի քննարկումն իսկ նախանշան է, թե Եվրոպայում առհասարակ ինչ «վստահություն» ունեն ադրբեջանական ընտրությունների հանդեպ: Բայց դա դեռ բոլորը չէ: Բանաձեւ հոդված 30-ը «լիովին կոռումպացված» է որակում Ադրբեջանի «ողջ իրավապահ համակարգը»: Իսկ հոդված 36-ն անդրադառնում է Եվրոպայում ադրբեջանական «խավիարային դիվանագիտությանը»:**

**Այս ընդգծումը հետաքրքրական է նրանով, որ ԵԽԽՎ բանաձեւի նախագծում հստակ ասված է, ինչպես «Թուրան»-ի աղբյուրներն են վստահեցրել, որ Ադրբեջանը «խավիարային դիվանագիտություն» է իրականացնում, «որպեսզի ԵԽ-ում եւ ԵԽԽՎ-ում ընդդիմանա (Ադրբեջանում) մարդու իրավունքների եւ քաղբանտարկյալների հետ կապված քննադատական հաշվետվություններին»:**

**Փաստորեն, ԵԽԽՎ բանաձեւի նախագծում արձանագրված է, որ ադրբեջանական կողմը սեփական կոռումպացվածությունը փորձում է տարածել նաեւ եվրոպական կառույցներում, որպեսզի խուսափի քննադատությունից կամ ընդունվեն իր տեսակետներին մոտ փաստաթղթեր:**

**Այնուհետեւ բանաձեւի նախագծում ընդգծված է, որ Ադրբեջանը չի միացել կոռուպցիոն հանցագործությունների համար պատասխանատվության միջազգային կոնվենցիային: Իսկ դա նշանակում է, որ այդ երկրում կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքական նպատակադրվածությունը բացակայում է: Ուշագրավ է, որ նախօրեին ընդդիմության նախագահի թեկնածու Ջամիլ Հասանլին եւս մեկ անգամ Ադրբեջանի «թիվ մեկ կոռուպցիոներ» է անվանել Իլհամ Ալիեւին, որը «երկիրը կառավարում է ինչպես սեփական բիզնես-հոլդինգ»:**

**Ստացվում է, որ ԵԽԽՎ-ի եւ Ադրբեջանի նախագահի ընդդիմադիր թեկնածուի գնահատականները նույնական են: Սպասենք, թե նույն Եվրոպայի խորհուրդն ինչ գնահատական կտա Ադրբեջանի նախագահական «ընտրություններին», ինչպիսին կլինի նույն հարցում Սպիտակ տան վերաբերմունքը: Առայժմ Ադրբեջանի նախընտրական իրավիճակին «դրական գնահատական» տվել են այդ երկրի ԿԸՀ-ն եւ... ԱՊՀ դիտորդական առաքելությունը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ Տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

## Մայր աթոռ

# Եպիսկոպոսական ժողովը՝ եղբայրական սիրով համախմբման հնարավորություն

*1-ին էջից*

Սեպտեմբերի 24-ին սրբադասման ավանդության վերականգնման հարցը քննության առնելուց հետո եպիսկոպոսական ժողովը որոշել է ուղեգրել Հայոց ցեղասպանության նահատակների հավաքական սրբադասման սկզբունքը եւ հանձնարարել սրբադասման հանձնախմբին՝ շարունակել նահատակների անհատական եւ խմբային սրբադասման ուսումնասիրությունը՝ եպիսկոպոսաց առաջիկա ժողովներին ներկայացնելու համար: Ըստ որում՝ մշակվելու են սրբադասման կանոնակարգը եւ արարողակարգը, որը նույնպես պետք է 2014 թվականին գումարվելիք եպիսկոպոսական ժողովին ներկայացվի: Ապա եւ՝ ժողովի կողմից ուղեգրվելուց հետո հղվի երկու հայրապետներին, որպեսզի նրանք հայրապետական կոնդակով հռչակեն սրբադասում: Դրան համաձայն՝ հատուկ արարողակարգ կհաստատվի, շարական կխմբագրվի, սրբապատկեր կպատրաստվի:

Լրագրողների հետաքրքրասիրությանն ի պատասխան՝ Նարեկ արքեպիսկոպոսը իրարից չանջատեց ազգային պահանջատիրությունն ու սրբադասման հոգեւոր ոլորտը: Արշակ եպիսկոպոսը սրբադասման քաղաքական հետեւանքների մասին խոսելիս նշեց, որ այն թեեւ կրոնական-հոգեւոր ակտ է, սակայն կարող է քաղաքական ածանցումներ ունենալ, եւ այդ ռիսկերը ժողովի ժամանակ փորձել են գնահատել: Բոլոր դեպքերում եւ անկախ ամեն տեսակի շահարկումներից մեր եկեղեցին պետք է արտահայտի իր վերաբերմունքը ցեղասպանության զոհերի հիշատակի եւ նրանց հոգիների հանգստության ի սեր: Զուգորդելով կրոնական եւ քաղաքական ասպեկտները՝ նա նաեւ ընդգծեց, որ որեւէ ոճրագործություն նրա հեղինակի պատասխանատվության հարց է առաջացնում, եւ ներողամտության արժանանալու համար երեք գործողություններ են պետք. մեղքի խոստովանություն, հատուցում, եւ այլեւս չկրկնելու նախապայման. «Սա նաեւ հոգեւոր-կրոնական տեսակետից ամբողջական ներդաշնակ է մեր ժողովրդի, մեր ազգի դրսեւորած վարքագծին ցեղասպանության ճանաչման հարցում», ասաց Արշակ եպիսկոպոսը:




Ժողովում մեր եկեղեցու առաջին երկու խորհուրդների՝ Մկրտության եւ Դրոշմի արարողակարգերի խնդիրները քննարկելով ընդունվել է միօրինակ բնագիր: Սակայն այս ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են: Երկար ժամանակ է, որ ուսումնասիրվում են Մկրտության ծեսն ու հարակից հարցերը: Հաճախ թե՛ քահանաները, թե՛ ժողովրդի մի ստվար հատված տեղյակ չեն, թե այս կամ այն իրավիճակում ինչպես պետք է վարվել: Ու չնայած կանոնական եւ բարեպաշտական հարուստ ավանդույթ կա այդ առումով, բայց կարծես խզում է առաջացել Մկրտության ամբողջական արարողության եւ մեր կյանքի պայմանների միջեւ, այնպես որ պետք է ներդաշնակեցնել եւ համապատասխանեցնել դրանք: Ըստ բանախոսների՝ հարցն արդիական է, եւ Մկրտության արդիականացումը ճանապարհներից մեկն է մարդկանց եկեղեցուն կապելու: Նույն խնդիրն է նաեւ ծիսական լեզվի հետ կապված, որի վերաբերյալ բուռն քննարկումները նույնպես հանգեցրել են նրան, որ հավելյալ ուսումնասիրություններ են հանձնարարվել: Ծեսի լեզվի հետ կապված հարցը դիտարկվում է երկու մարտահրավերների տեսակետից. եկեղեցին պահպանողական արժեքներ կրող հաստատություն է, բայց մյուս կողմից՝ կան նաեւ ժամանակակից կյանքի մարտահրավերները: Երբեմն ծեսի լեզվի անմատչելիության մասին արձագանքներ են լինում, մի զանգված էլ պահանջում է հասկապես գրաբարը պահպանել: Բանախոսները բերեցին կաթոլիկ եկեղեցու օրինակը, երբ ծեսի կրճատումն ու մատչելիությունը նոր զանգվածներ չեն ապահովել դեպի եկեղեցի: Բայց՝ եկեղեցու առաքելությունն է գտնելու խելամիտ եւ օպտիմալ լուծում, որով կպահպանվի եւ ավանդույթը, նաեւ մատչելի կլինի ծիսական լեզուն ժողովրդին: Հենց դրա համար լրացուցիչ քննարկումների անհրաժեշտություն է ծագել՝ համապարփակ ուսումնասիրելու եւ վերջնական լուծում առաջարկելու:

Եպիսկոպոսական ժողովն արդյունքներն ափոփելիս անդրադարձ է արել մեր ժողովրդի ազգային, եկեղեցական կյանքում առկա ընկերային, տնտեսական, ժողովրդագրական եւ տարաբնույթ այլ մարտահրավերներին, որոնց ընդառաջ հաստատվել է հիմնադրամ՝ Հայաստանի, Արցախի եւ սիրիահայության կարիքավոր զավակներին աջակցություն ցուցաբերելու համար:

Հիմնադրամի գործունեության մեկնարկը հաստատվել է 2 միլիոն ԱՄՆ դոլար նախնական դրամագլխով, ապա եւ ստեղծվել է հանձնախումբ՝ հիմնադրամի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու համար:

Մամուլի այն հրապարակումները, որ հրավիրյալ եպիսկոպոսներից 10-ի բացակայությունը նշանակում է բոյկոտ, Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը անհեթեթ համարեց. տարբեր ժողովներին միշտ էլ տարբեր պատճառներով որոշակի բացակայություններ լինում են: Ըստ նրա՝ 72-ից 62-ի ներկայությունն արդեն իսկ խոսուն վկայություն է, քվորումն ապահովված էր, եւ այլ մեկնաբանություն լինել չի կարող:

# Բարերարների ընտանիքում

*1-ին էջից*

Որտեղ էլ ապրեցի, որքան էլ վաստակեցի, երբեք միայն անձնականիս համար չծախսեցի: Շարունակաբար օգնել եմ մարդկանց, մասնակցել ազգային ու եկեղեցական տարբեր ձեռնարկների:

1970 թ. ընկ. Երվանդ Ազատյանի կնքահայրությամբ անդամագրվեցի ՌԱԿ-ին եւ մինչ օրս հավատարմորեն ծառայում եմ այդ կուսակցությանն ու նրա բոլոր հայրենանպաստ ձեռնարկներին:

Երբեմն դժվարանում էր խոսել, մի քիչ վատառողջ էր, մի քիչ էլ հայերեն բառերն էին փախչում: Չէր ուզում այդ թեմայով խոսել, խնդրեցի, պնդեցի:

- Որքան էլ հարստացանք, երբեք չմոռացանք մի մասը ազգին, եկեղեցուն ու կուսակցությանը բաժին հանել: Բազմաթիվ ձեռնարկներով եւ անձնական նվիրատվություններով օգնել ենք Թեքեյանի դպրոցներին, Երուսաղեմի պատրիարքությանը, Արցախին, Ջավախքին, ՀՀ դեսպանատներին, սատարել Մայր աթոռ Ս. Էջմիածնի շատ ձեռնարկների: Վերջերս, օրինակ, Օշականում հողեր գնեցինք ու նվիրեցինք եկեղեցուն, որտեղ գեղեցիկ ու ազգային մասունքները ներկայացնող պուրակ պիտի լինի: Երկար տարիներ Հայոց եկեղեցու արեւելյան թեմական խորհրդի անդամ եմ: Եկեղեցու կողմից պարգեւատրված եմ «Ներսես Շնորհալի» եւ «Գրիգոր Լուսավորիչ» շքանշաններով եւ բազմաթիվ շնորհակալագրերով:



*Երկու տարի առաջ, իրենց ամուսնության 50-ամյակի առթիվ, տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիտ Մկրյանները ստանում են Վեհափառ հայրապետի օրհնությունը:*

Իմ այն հարցին, թե ի՞նչ են նշանակում այդ բոլոր պարգեւները Ձեզ համար, իրեն հատուկ պարզությամբ, մի քիչ զարմացավ, ապա շարունակեց.

- Հպարտություն են, հզորություն, գնահատված լինելու լավագույն ապրումներ, ոչ միայն իմ, այլեւ ընտանիքիս, զավակներիս, ութ հրաշք թոռնիկներիս համար, բայց...:

Բավական երկար ընդմիջեց խոսքը, ապա շարունակեց.

- Դրանք ավելի շատ պարտավորեցնող են, ավելին անելու կոչ-հորդորներ, ուրիշներին գործի մեջ ներգրավելու առաջադրանք են, գալիքին ավելի վստահ ու համարձակ նայելու հնարավորություն:

Իր յուրահատուկ ու համեստ սուրճով մեր զրույցին միացավ տիկին Անահիտը: Գորովալից հայացքով հաճախ էր նայում ամուսնուն, լրացնում, հուշում: Չգիտեմ ինչու, բայց մորս էր հիշեցնում, նրա ամեն ինչում մայրություն կար:

- Առանց Անահիտի բարեհաճության ու անմիջական մասնակցության ոչինչ չէր ստացվի: Ինչ արել եմ, ինչի հասել եմ, կեսից ավելին՝ նրա շնորհիվ: Մեր տան դռները միշտ բաց են եղել, բազմաթիվ մարդիկ են այնտեղ բնակվել, հատկապես եկեղեցու շատ սպասավորներ բուժվելու եւ այլ առիթներով ամեն անգամ Ամերիկա գալուց իրենց են հյուրընկալվել: Պատահական չէ, որ Գարեգին Վեհափառը Անահիտին «Վարդապետներում մայր» է կոչում:

- Մի անգամ,- արձագանքելով իմ այն դիտարկմանը, թե կանայք ավելի նյութասեր են եւ ավելի շատ են ձգտում բարեկեցիկ կյանքի, իսկ դուք ոչ միայն դեմ չեք լինում, այլեւ ինքներդ եք քաջալերում ու նպաստում բարեգործություններ անելու, ասաց տիկին Անահիտը,- մի լավ մուշտակ հավնեցանք, ինձ ալ շատ կսազեր, բայց երբ առաջին անգամ Ջավախք գացինք ու շատ տխուր տպավորություններ ստացանք, որովհետեւ հոն լույս չկար, հացը սուղ էր եւ այլն, ես խնդրեցի մուշտակի գումարով Ջավախքի որբերուն օգնել: Այդ արարքս մինչ օրս ինձ ավելի կջերմացնե, քան ամենատաք ու հաստ շատ մուշտակները միասին:

- Ամեն անգամ, երբ Հայաստան ենք գալիս, լավ փոփոխությունները, անշուշտ, աչքի են զարնում: Ամերիկայում հպարտորեն պատմում ենք այդ մասին, սակայն կան նաեւ մտահոգիչ երեւույթներ, որոնցից ամենացավոտը, թերեւս, շարունակվող արտագաղթն է, որը նման է շարունակվող արյունահոսության: Դրանից մարմինն ամեն օր թուլանում է, չի դիմանա, բոլորս պիտի դարմանենք:

- Գիտեմ որ շատ ձեռնարկների եք մասնակցում, կթվարկե՞ք մի քանիսը:

- Դրանք մեր ժողովրդի համար են: Ասեմ, որ ազգային շատ ձեռնարկների եմ մասնակցում, օգնել եմ ու օգնում եմ մեր եկեղեցուն: Օրինակ՝ Վեհափառի միջոցով որպես օգնություն տարեկան միայն 50.000 ԱՄՆ դոլար Ջավախքի առաջնորդարանին ենք փոխանցում, օգնում ենք ՌԱԿ մամուլին, մասնավորաբար՝ «Միրոր-սփեքթեյթր»-ին: Վերջերս ֆիզիկական արատներով ծնված հիվանդ երեխաների սատար եղանք: Նպաստեցինք նաեւ ՌԱԿ-ի մի շարք ձեռնարկներին, հովանավորեցինք միջոցառումներ եւ այլն:

Ինչ վերաբերում է կուսակցությանը, ապա համամիտ եմ Ձեր այն տեսակետին, որ Հայաստանում համագումար պիտի հրավիրվի, կուսակցությունը դառնա հայաստանակենտրոն, համագումարը՝ շրջադարձային: Համոզված եմ, կխթանի նաեւ կենտրոնատեղի ունենալու փաստը:

Շատ բան կար զրուցելու, սակայն որոշեցի չչարաշահել այդ հյուրընկալ ընտանիքի համբերությունը: Մեկ անգամ էլ շնորհավորեցի պետական բարձր պարգեւի եւ հաճելի տպավորությունների համար: Հրաժեշտ տվեցի տարիների հարստությունից հզորացած, ամերիկաբնակ, սակայն իր ողջ էությամբ հայեցի, մարդամոտ, ավանդապաշտ եւ, ամենակարեւորը, հոգեւոր արժեքները նյութական հարստությունից գերադասող մեր օրերում քիչ հանդիպող ընտանիքին կրկին հանդիպելու ցանկությամբ:

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**
**դքթ, ՌԱԿ ատենադպիր**



*Բարոնուհի Քերոլայն Քոքս*



*Ամերիկացի տիեզերագնաց Չարլզ Մոս Դյուկ կրտսեր*



*Ավստրիացի դիրիժոր ԷռնեստՀոյցլ*

# Ոչ ավանդական «պատվո ցուցակը»



*Բեռլինի ակադեմիայի նախագահ դոկտ. Եկարտ Ստրատենշուլտ*

Ավանդույթ է դարձել, որ նոր տարվա նախաշեմին բրիտանական կառաարությունը ամեն տարի հրատարակում է ցանկը այն հարգարժան մարդկանց, ովքեր իրենց նպաստն են բերել Բրիտանիայի բարօրությանը եւ անհատական բացառիկ հաջողություններ են արձանագրել գիտության տարբեր ոլորտներում: Շատ բրիտանացիներ արժանացել են այդ ցուցակում լինելու պատվին:

Այս հոդվածում նշված «պատվո ցուցակը», սակայն, ոչ մի առնչություն չունի բրիտանական կառավարության հետ: Չի առնչվում նաեւ որեւէ մեկի բարօրությանը նպաստող դրական նվաճումներին: Այս մեկը հրապարակվել է Ադրբեջանի կառավարության կողմից՝ ոչ թե պարզելու կամ գնահատելու, այլ պարզապես թշնամանքով առանձնացնելու բոլոր նրանց, ովքեր Ադրբեջանում «սեւ ցուցակի» մեջ են եւ հայտարարված են «անցանկալի» անձ (persona non grata):

Պատիվ ունեմ ընդգրկված լինելու այդ ցուցակում եւ լրագրող չլինելով՝ ներկայացված լինել որպես լրագրող: Ինձ համար իսկապես պատիվ է իմ անունը տեսնել շատ հարգված եւ միջազգային ճանաչման արժանացած անձնավորությունների կողմքին: Նրանց թիվը այդ ցուցակում հասնում է 335-ի, կազմելով «բախտավորների մի յուրահատուկ ընկերակցություն»:

Ադրբեջանական այդ «պատվո ցուցակում» ընդգրկված են տարբեր խավերի ու տարբեր մասնագիտությունների մարդիկ՝ լրագրողներ, քաղաքագետներ, գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, գիտնականներ, բարերարներ, դիվանագետներ, օպերային երգիչներ եւ այլք, աշխարհի ամենատարբեր կողմերից՝ Ճապոնիայից մինչեւ Արգենտինա եւ նույնիսկ հարեւան Թուրքիայից, հաստատելով այն ճշմարտությունը, որ Ադրբեջանը թշնամիներ ունի անխտիր ամբողջ աշխարհում:

Իսկ ի՞նչն էր այդ թշնամական ցուցակում ընդգրկված 335 մարդկանց միավորում: Մի՞թե կարող է օպերայի երգիչը վտանգավոր թշնամի լինել Ադրբեջանին, եթե երգում է Ղարաբաղում, կամ խորհրդարանականը, որ Ղարաբաղ է այցելում՝ քննարկելու հակամարտության խաղաղ լուծում գտնելու միջոցները՝ դիվանագիտական եւ ոչ թե ռազմական հնարավորությունները: Որո՞նք են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում մարդիկ ընդգրկվում են այդ ցուցակում:

Ես անձամբ այն կարծիքին եմ, որ մեզ՝ 335 անձնավորություններիս նման ցուցակում ընդգրկելու փոխարեն Ադրբեջանի կառավարությունը ավելի ճիշտ կվարվի, եթե մեզ Բաքու հրավիրի եւ հյուրասիրի «նավթախավիարային դիվանագիտությամբ», ինչպես սովոր է անել մարտավարական կարեւոր անձնավորությունների հետ, ցույց տա բարեկիրթ վերաբերմունք, հարգանք, սիրալիրություն եւ փորձի իր տեսակետները ներկայացնել մեզ՝ համբերությամբ, առավել դատողությամբ եւ ճշմարտացիորեն:



*Իսպանացի օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալիե*

Ես ադրբեջաներենին չեմ տիրապետում, բայց հրատարակված նկարներից պարզեցի, որ այդուհանդերձ երկու շատ կարեւոր անձնավորություններ դուրս են մնացել Ադրբեջանի թշնամիների այդ ցուցակից: Դրանք Ռամիլ Սաֆարովի եւ Իլհամ Ալիեւի անուններն են: Այդ երկու անձնավորությունները շատ ավելի մեծ վնաս են հասցրել Ադրբեջանին, քան որեւէ երգիչ, բարերար, դիվանագետ կամ քաղաքական գործիչ:

Անմեղ հային քնած ժամանակ դաժանորեն սպանելով եւ հետագայում պատիվների արժանանալով՝ Ռամիլ Սաֆարովը ապացուցեց աշխարհին, որ սպանելը եւ հանցագործությունը ընդունված եւ խրախուսված նորմաներ են Ադրբեջանում: Նա պետք է պատվավոր տեղ գրավի այդ ցուցակում, քանի որ իր հանցագործությամբ նա ավելի խաթարեց Ադրբեջանի հեղինակությունը, քան ցուցակում նշված 335 անձնավորությունները միասին կարող էին անել:

Իսկ նախագահ Իլհամ Ալիեւի անունը գուցե Սաֆարովից առաջ դրվի ցուցակում, քանի որ նա էր, որ գնեց Սաֆարովի ազատությունը «նավթա-դոլարա-խավիարային դիվանագիտությամբ»: Ավելին, նա էր, որ միջազգային հանրությանը ցույց տվեց, որ հանցագործությունը գնահատվում եւ խրախուսվում է Ադրբեջանում: Եվ հիմա, երրորդ անգամ նախագահ ընտրվելու նախաշեմին, ինչը ավելի շատ կշեղի մարդկանց ուշադրությունը ներքին խնդիրներից եւ անկարող կդարձնի նրանց ընդդիմադիր խմբավորում կազմելու, քան մի նոր ագրեսիայի սանձազերծումն ընդդեմ Ղարաբաղի:

Իր ժողովրդին պատերազմի մեջ ներքաշելու եւ աշխարհին ցույց տալու համար, որ բոլոր ադրբեջանցիներն են Սաֆարովի նման մարդասպաններ (չնայած ես չեմ հավատում դրան), Ալիեւը արժանի է ամենաառաջին տեղը զբաղեցնելու այդ ցուցակում:

Ես ուրախ եմ եւ երախտապարտ, որ Հայաստանի եւ Ղարաբաղի կառավարությունները իրենց զանգվածային լրատվամիջոցները օգտագործում են խրախուսելու համար միջազգային ճանաչման արժանացած անձնավորությունների այցելությունները Հայաստան եւ Ղարաբաղ: Դրանով նրանք բարի կամեցողների եւ բարեկամների մի լավ խումբ են կազմավորում:



*Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Ժորժ Կոլոմբիե*

Թող այդ երկու՝ «Հայաստանի եւ Ղարաբաղի բարեկամների» եւ «Ադրբեջանի թշնամիների» ցուցակները օր օրի մեծանան՝ ներառելով հազարավոր նոր անուններ, որպեսզի վերստին հրատարակվելու դեպքում (միգուցե հաջորդ տարի) աշխարհը տեսնի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գոյություն ունեցող քաղաքակրթական տարբերությունը:

Ադրբեջանի կառավարության հրատարակած ցուցակը կարելի է տեսնել այցելելով «http://mfa.gov.az/files/file/Arzvolunmaz%20Shexslerin%Siyahisi-2013-pdf» կայքը:

**ՕԴԵԹ ԲԱԶԻԼ**
**Բուկինգհեմշիր, Միացյալ Թագավորություն**
**Թարգմ. Հ. Ծ.**

# Շինդլերը, Լեմկինը եւ ցեղասպանության հարցը

Կալիֆոռնիա համալսարանից (UCLA) խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ հոկտեմբերի 1-ին Չեփմեն համալսարանի (Օրենջ, Կալիֆոռնիա) Ուալաս ամենայն հավատաց մատուռի «Fish Interfaith» կենտրոնում Էլոն համալսարանի պատմության եւ Էլոնի իրավաբանական ֆակուլտետի իրավագիտության պատմության դոկտոր, պրոֆեսոր Դեյվիդ Կրոուին դասախոսություն է կարդալու «Օսկար Շինդլերը, Ռաֆայել Լեմկինը եւ ցեղասպանության հարցը» թեմայով:

Նա փորձելու է բացահայտել կապը փրկարար դարձած նացիստական կուսակցության անդամի, ցեղասպանությունը շրջանառության մեջ դնող Լեհաստանից հրեա փաստաբանի եւ սադիստական մոլուցքով ցեղասպանություն իրականացնող նացիստ Ամոն Գոթի միջեւ: Դաժան հրամանատար, էսէսի հաուպտշտուրմֆյուրեր Ամոն Գոթի անվան հետ է սերտորեն կապված Պլաշովի համակենտրոնացման եւ հարկադրական աշխատանքի ճամբարը: 1943-ի մարտին Օսկար Շինդլերը կարողանում է համոզել Գոթին, որ իր գործարանին կից կառուցի սեփական ենթաճամբարը: Այդ քայլով էլ նրան հաջողվում է Գոթի դաժանություններից եւ անկանխատեսելի սպանություններից փրկել ավելի քան 1100 հրեաների կյանքը:

Պատերազմից հետո Գոթին առաջինը մեղադրանք ներկայացրին, դատեցին եւ մեղավոր ճանաչեցին զանգվածային սպանությունների համար: Երկու տարի անց միայն ՄԱԿ-ն ընդունեց ցեղասպանության ոճրագործությունը կանխելու եւ պատժելու կոնվենցիան:

Պրոֆ. Դեյվիդ Կրոուին նաեւ Կոլումբիա համալսարանի ազգությունների ուսումնասիրությունների ասոցիացիայի պատվավոր նախագահն է: 1990-2004 թվերին անդամ էր Մ. Նահանգների Հոլոքոսթի հուշաթանգարանի կրթական հանձնաժողովի: Նրա հեղինակած գրքերի թվում են «Պետությունների ոճրագործությունները անցյալում եւ ներկայում: Կառավարական հովանավորչությամբ գործադրված վայրագությունները եւ միջազգային իրավական արձագանքները» (2001 թ.), «Արեւելյան Եվրոպայի եւ Ռուսաստանի գնչուների պատմությունը» (Բ. հրատարակություն, 2007 թ.), «Հոլոքոսթը, արմատները, պատմությունը եւ հետեւանքները» (2008 թ.):

Այս տարի Պալգրեյվ Մակմիլան հրատարակչությունը լույս է ընծայելու նրա «War Crimes, Genocide and fustice: A Global History» (Պատերազմական ժամանակների ոճրագործություններ, ցեղասպանություն եւ արդարադատություն: Գլոբալ պատմություն» ուսումնասիրությունը:

Վերոնշյալ դասախոսությանն իր մեկնաբանություններով մասնակցելու է նաեւ Կալիֆոռնիա համալսարանի հայկական եւ միջինարեւելյան պատմական ուսումնասիրությունների ամբիոնի պատվավոր պրոֆեսոր, դոկտ. Ռիչարդ Հովհաննիսյանը:

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# Գինու որակի քաղաքական ցուցանիշները ռուսական շուկայում

Մահակի եւ բլիթի քաղաքականությունը, թվում էր, թե մնացել է անցյալում, բայց այսօրվա, հատկապես հզորների պարագայում, այդօրինակ պարզունակ միջոցն ամենակիրառականն է: Նկատի ունեմ այն հզորներին, որոնց հզորությունը զենք ու զինամթերքն է, մտածելակերպն էլ՝ հազարամյակի փոշով է պատված:

Սեպտեմբերի սկզբին Ռուսաստանը հանկարծ հիշեց, որ իր շուկայում մոլդովական գինին պետք է ստուգել: Ռուսաստանի գլխավոր սանիտարական բժիշկ Գենադի Օնիշչենկոն հիշեց, եւ մոլդովական գինու եւ գինեգործության մյուս արտադրատեսակների համար ռուսական սահմանը փակվեց: Օնիշչենկոն իր որոշումը պատճառաբանեց գինեգործական արտադրանքի անբավարար որակով, նաեւ մոտեցմամբ, թե «Ռուսաստանը մտադիր չէ դայակի դեր կատարել մոլդովական տնտեսության համար»:



Որ մոլդովական գինում կամ կոնյակում կարող են վնասակար նյութերի չափաբաժինները նորմաներից բարձր լինել, մեր վիճարկելիքը չէ, սակայն երբ այդ մասին ընտրովի, երբ հարմար է կամ անհրաժեշտ, հիշում են ռուսաստանյան համապատասխան հաստատությունները, ակամա միտքդ է գալիս 2006-ին վրացական գինու ոդիսականը: Իսկ վերջինի ռուսաստանյան շուկա մուտքի արգելափակումը, որքան էլ հիմնավոր էր (Վրաստանում պարզապես անհնար էր այնքան գինի ու կոնյակ արտադրել, որքան արտահանվում էր Ռուսաստան- Վ.Պ.), այդուհանդերձ, եւ ամենից առաջ, քաղաքական որոշում էր, որը տեղի ունենում է նաեւ Մոլդովայի դեպքում:

Վրացական գինին երկար ժամանակ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հետ, նրա անձնական ճամպրուկում, այս ու այն երկիր էր տարվում, որ վաճառքի դուրս բերվեր: Սակայն վերջին վրաց-ռուսական զարգացումները նորից վրացական գինու ճամփան Ռուսաստան բացել են, այն էլ՝ բավականին լայն դռնով արտահանվելու համար:

Ռուսական շուկան ոչ միայն կրկին ընդունեց վրացական գինեգործության արտադրանքը, այլեւ ընդամենը երկու օր առաջ Ռոսպոտրեբնադզոր կոչվող հաստատությունը վրացական 31 ընկերությունների համար գինի մատակարարելու արգելքը հանել է: Նաեւ վրացական երեք ընկերություններ կարող են Ռուսաստան հասցնել իրենց հանքային ջրերը: Ընդհանուր առմամբ, վրացական 91 գինեգործական, 7 հանքային եւ խմելու ջրերի, 1 գարեջրագործական ընկերություններ ունեն Ռուսաստան արտահանման թույլտվություն: Արդյո՞ք դա նշանակում է, որ Վրաստանը մտնում է ապագայի Ռուսաստանի համար ընդունելի հուն՝ ցույց կտա ժամանակը:

Մոլդովայի եւ Վրաստանի նկատմամբ այս մոտեցումների պարզ համադրությունը մի փաստ ցցուն է դարձնում, որ Ռուսաստանում այս կամ այն երկրի արտադրանքի նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերվում, երբ այդ երկիրն «իրեն լավ չի պահում»: Այս համատեքստում հետաքրքրական է «Հետք» կայքէջի երեկվա տեղեկատվությունը, որ սեպտեմբեր ամսին Ռուսաստանի տարածքում հայկական մի քանի ընկերությունների արտադրության սննդամթերքի վաճառքի վրա դրվել է խիստ հսկողություն:

Սեպտեմբերի 5-ին խիստ հսկողություն է սահմանվել հայկական «Որդի Արմենի» ՍՊԸ-ի արտադրության կաթնամթերքի, իսկ սեպտեմբերի 13-ին՝ «ԲԱԿՍՍ» ՍՊԸ-ի ծովամթերքի վրա:

Հայկական երկու այլ ընկերությունների որոշ արտադրատեսակների վաճառքն այժմ պարզապես արգելված է: 2013թ. օգոստոսի 30-ից արգելանք է դրվել «Կոնստանտին եւ քույրեր» ՍՊԸ-ի, իսկ հուլիսի 15-ից՝ «ԳՈՍ» ՓԲԸ-ի արտադրության ծովամթերքի վրա՝ դրանցում վտանգավոր բակտերիաների առկայության հիմքով: Վերջին ընկերության արտադրանքի վրա դեռեւս խիստ հսկողություն է սահմանվել 2012թ. օգոստոսի 31-ին, ապա 2013թ. հունիսի 19-ին: Ի վերջո, ընկերության՝ Ռուսաստան արտահանած կենդանի խեցգետինների վաճառքն արգելվել է:

Այսինքն՝ տնտեսական պատժամիջոցները, որ գործադրվում են Մոլդովայի ու Վրաստանի հանդեպ, եւ որոնց միջազգային արձագանքը շատ բարձր է, գործում են նաեւ հայկական ընկերությունների պարագայում, բայց մի տեսակ սուսուփուս...

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Կրակել են Էրդողանի պահակախմբի վրա

Սեպտեմբերի 27-ին մի անհայտ անձնավորություն կրակ է բացել Ստամբուլի օդանավակայանից դեպի քաղաք վարչապետ Էրդողանի անցումը նախապատրաստող նրա պահակախմբի վրա: Ինչպես հաղորդում է CNN Turk հեռուստաալիքը, հրաձգությունից ոչ ոք չի տուժել:

Միջադեպը տեղի է ունեցել Մուստաֆա Քեմալի կամրջի շրջանում: Հրաձգության պատճառով վարչապետի ավտոշարասյան երթուղին փոխվել է. նա քաղաք է մուտք գործել տվյալ վայրը շրջանցելով:

Քննիչներն անմիջապես մեկնել են միջադեպի վայր: Կամրջից հարյուր մետր հեռու հայտնաբերվել է արձակված 7 գնդակի պարկուճ: Ոստիկանությունը սկսել է դեպքի քննությունը եւ կասկածյալի (կամ կասկածյալների) որոնումները:

Ավելի վաղ Թուրքիայի իշխանությունները հայտարարել էին, թե Էրդողանի պահակախումբը կանխել է նրա դեմ ուղղված մի քանի մահափորձ: Մասնավորապես հաղորդվել էր, որ 2011-ին անհայտ անձինք հարձակվել են վարչապետի շքախմբի վրա եւ սպանել մեկ ոստիկանի:

Պ. Ք.

ՆՅՈՒ ՅՈՐՔ

# Իրանը շուտով կպարզաբանի իր միջուկային ծրագրի խաղաղ բնույթը

**Նյու Յորքում տեղի է ունեցել «Վեցյակի» երկրների (ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Չինաստան եւ Գերմանիա) արտգործնախարարների հանդիպում Իրանի արտգործնախարար Ջավադ Զարիֆի հետ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**«Վեցյակի» նիստից հետո Զարիֆը առանձին բանակցել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրիի հետ: Դա նման բարձր մակարդակի առաջին հանդիպումն էր վերջին 6 տարում:**

**Ամփոփիչ մամլո ասուլիսում ելույթ ունենալով՝ Զարիֆը հույս է հայտնել, որ շատ շուտով համաշխարհային հանրությանը Իրանի ներկայացնելիք փաստերը թույլ կտան համոզվել, որ իրանցիների միջուկային ծրագիրը խաղաղ բնույթ է կրում: Նա կայացած հանդիպումներն անվանել է «անչափ կառուցողական»:**

**Համանման գնահատականներով հանդես են եկել Ջոն Քերրին եւ «Վեցյակի» երկրների մյուս արտգործնախարարները:**

**Բանակցությունների արդյունքների հիման վրա կողմերը հաջորդ հանդիպումը նշանակել են հոկտեմբերի 15-16-ը Ժնեւում:**

**Արեւմուտքի երկրները տարիներ շարունակ փորձում են Թեհրանին ստիպել հրաժարվել միջուկային ծրագրից՝ վախենալով, որ Իրանը կարող է ստեղծել միջուկային զենք: Իրանի ներկայիս նախագահ Հասան Ռոուհանին երկար ժամանակ երկրի պաշտոնական ներկայացուցիչն էր միջուկային ծրագրին նվիրված բանակցություններում: Նրա նախագահ դառնալուց հետո բազմաթիվ դիտորդներ սկսեցին խոսել հարցի լուծման մեջ հնարավոր տեղաշարժերի մասին: Ավելի վաղ Ռոուհանին նշել էր, որ պատրաստ է քննարկել ծրագրից մասնակիորեն հրաժարվելու հնարավորությունը՝ հանուն Արեւմուտքի հետ հարաբերությունների բարելավման:**

Պ. Ք.

# Լիբիայի եւս մեկ շրջան իրեն ինքնավար է հռչակել

**Լիբիայի հարավարեւմտյան շրջան Ֆեցցանը իրեն հռչակել է ինքնավար դաշնային նահանգ: Այդ մասին հաղորդում է «Ալ Արաբիա» հեռուստաալիքը: Ֆեցցանի նախագահ է ընտրվել Նուրի Մուհամմեդ ալ Քուիզին: Տեղական ցեղերը մտադիր են ավելի ուշ նշանակել շրջանային զորապետ, որը կզբաղվի նահանգի եւ դրա օգտակար հանածոների պաշտպանությամբ:**

**Տեղական ցեղապետները պնդում են, որ ինքնավարության ստեղծումն անհրաժեշտ է շրջանի րին հաճախ հանձնում են ցեղապետների դասին: Ֆեցցանի սահմանները ոչ ոք չի վերահսկում: Բացի դրանից՝ տեղացի առաջնորդները պնդում են, թե դաշնային իշխանություններն անբավարար չափով են պաշտպանում նավթահանույթի վայրերը:**

**Ավելի վաղ իրեն ինքնավար էր հռչակել Լիբիայի արեւելքում գտնվող Կիրենաիկա տարածաշրջանը: Դա տեղի էր ունեցել 2013 թ. հունիսի 1-ին: տեղական ցեղապետները որոշել էին վերականգնել Լիբիայի 1951 թ. սահմանադրության գործողությունը, որի համաձայն երկիրը իրենից ներկայացնում է դաշնապետություն: Բացի դրանից՝ նախատեսվում էր ժամանակի ընթացքում ձեւավորել իշխանության սեփական մարմիններ՝ խորհրդարան եւ կառավարություն: Տեղացիները որոշել էին ինքնավարություն ստեղծել, քանի որ այլեւս չէին վստահում Տրիպոլիի դաշնային մարմիններին:**



**նկատմամբ Լիբիայի ժամանակավոր օրենսդիր մարմնի՝ Ընդհանուր ազգային կոնգրեսի ուշադրության բացակայության պատճառով: Պետության նախկին առաջնորդ Մուամմար Քադդաֆիի տապալումից ու սպանությունից հետո Ֆեցցանում իշխանությունը բաշխվեց արաբների, թուբուների եւ տուարեգների միջեւ: Դաշնային իշխանության բացակայության պայմաններում կողմերից յուրաքանչյուրը փորձում է հաստատել իր կարգերը, նշում է The Libya Herald թերթը:**

**Ոստիկանությունը չի համարձակվում միջամտել տեղական քրեական խմբավորումների բախումներին, այնպես որ բնակիչները ստիպված են կամավորական ջոկատներ կազմել հանցագործների դեմ պայքարելու համար: Դատարանները վախենում են դատել քրեական հեղինակություններին, ուստի մեղադրյալնե-**

**Հոկտեմբերի կեսերին Լիբիայում սկսվելու է հիմնադիր ժողովի թեկնածուների գրանցումը: Ժողովը պետք է գրի նոր սահմանադրություն: Դաշնավարության կողմնակիցները առաջարկում են ոչ թե գրել նոր սահմանադրություն, այլ ընդունել 1951 թ. լրամշակված սահմանադրությունը, ըստ որի երկիրը բաժանված էր երեք ինքնավար նահանգների. Ֆեցցան, Կիրենաիկա եւ Տրիպոլիտանիա:**

# Սոս Սարգսյան. «Տեր Աստված, հոգիս չառած՝ խելքս չառնես»



Սոս Սարգսյան...

Վերջին գույժը լսելուց հետո, հավանաբար, յուրաքանչյուր հայի մոտ մեծ վարպետի անունը տալուց շնչառության նույն դադարն է լինում:

Սոս Սարգսյանի առողջական խնդիրները դեռեւս անցյալ տարվանից ընկճել էին վարպետին: Մեկ տարի առաջ, «Հացի խնդիր» ներկայացման պրեմիերայի ժամանակ հանդիպեցի իրեն ու զրուցեցինք իր վերջին գրքի՝ «Ոտնամանների» մասին: Գրքում վարպետը ներկայացրել էր իր դաժան մանկության հիշողությունները Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիների, եւ լավ ոտնամաններ ունենալու եւ ոտքերը չսառչելու երազանքի մասին:

Ցավոք, առողջական խնդիրների պատճառով գրքի շնորհանդեսն այդպես էլ տեղի չունեցավ, չնայած Սոս Սարգսյանը կեսկատակ, կես-լուրջ ասում էր. «Ոտնամանները» լուրջ գործ չեմ համարում, բայց մարդիկ հավանում են, ես էլ ուրախանում եմ եւ գրքի վերջում գրել եմ, որ ոչ մի բան էլ չեմ ցանկանում ասել իմ ընթերցողին: Ինձ տանջող բաներ էին, գուցե էս գրվածքով ազատվեմ դրանցից: Դուռս խուփ անելու ժամանակն է...»:

- «Բարի պապիկը» (Սոս Սարգսյանին երիտասարդները «պապիկով» էին դիմում) հանդիպման ժամանակ խորհուրդ տվեց. «Գիտես, մեկ-մեկ լաց լինելը, մանավանդ երբ վկա չկա, քաղցր բան է, փորձիր... Հավեսի համար»:

Սոս Սարգսյանը չէր համակերպվում, որ իր ընկերներն այլեւս չկան ու ասում էր. «Արդեն համը հանում եմ, էսքան ապրելն ում է պետք: Ոչ Խորիկը կա, ոչ Ֆրունզը, ոչ մեկը չկա. ձեռ ձեռի տված՝ գնացին: Մեկ-մեկ նրանց ձայներն ականջովս են ընկնում, ուրախացած վեր եմ թռչում, բայց լռություն է տիրում: Սոսկալի բան է, երբ միտքդ ու սիրտդ ուրիշ տեղ են, դու՝ ուրիշ»:

Տարիներ շարունակ նա եղել է Ազգային ակադեմիական թատրոնի եւ կինոյի առաջատար դերասան: 1997-2006 թթ.՝ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր, 1991 թ. հիմնել է Համազգային պետական թատրոնը, արժանացել՝ ՀՀ Ժողովրդական արտիստի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչումներին, պարգեւատրվել է Մեսրոպ Մաշտոցի անվան շքանշանով, պետական մրցանակի եռակի դափնեկիր է:

Համազգային թատրոնում մեր լեգենդը բեմադրել է «Սանիտայի թաղապետը», «Լիր արքա», «Մի գավաթ բարություն», «Ծննդյան տոները Դոն Կուպիելլոյի տանը», «Խեղճ Պետրոս», «Չեխովյան կատակներ» եւ այլն: Իսկ այն դերերը, որոնք խաղացել է, նույնիսկ հաշվել հնարավոր չէ:

Վարպետը միշտ առանձնանում էր իր մարդկային տեսակով, նա ոչ միայն դերասան էր, այլ ազգի մասին մտածող, տառապող ՄԱՐԴ, եւ միշտ այնպիսի դիպուկ ձեւակերպումներ էր անում, որ... «Մեղքը սրա-նրա վրա բարդելով ջվալը չի կարվում: Ազգովին կդառնանք մեղադրող, պահանջող, փաստաբանող, ճառ ասող... Ճառ ասող... Մեր զանգն ով է կախելու... Մեր խոսքը մտածմունքից ծնենք, մեր կողմնորոշումը տանջահար մեր պետությունից: Խելոք մի մարդ ասել է քաղաքականությունը հնարավորության արվեստ է: Թեթեւամտորեն չկապկենք սրան-նրան, ուրիշ է մեր ճակատագիրը, այլ են մեր լուծելիք խնդիրները, ծանր է մեր խաչը...Հեշտ ենք կորցնում, դժվար ենք ետ բերում տանուլ տվածը... Կողքից նայողը կասի հայերը արդեն քանի դար պատրանքներով են ապրում: Պատճառն այն է, որ հաճախ ենք ուրիշի ձեռքին խաղալիք եղել: Մի հինավուրց ժողովուրդ, փորձված, ծեծված մի ժողովուրդ ժամանակն է, որ իր եղած բարեմասնություններին գումարի իմաստություն: Մեր վիճակը դեռ չի հասել գիտակցության մեր խորքերը: ... Մեր ապագան բզկտված, չարչրկված այս փոքրիկ հողակտորն է, մեր միակ հույսն է, խնայենք: Խնայենք ինքներս մեզ, խնայենք մերկացած ջղերով այս ժողովրդին... Մտավորականի համար չի կարող լինել «վերեւի-ներքեւի» կողմ: Հայրենիքն ամբողջական հասկացողություն է: Իրարհասկացողության ճամփան բռնենք...»:

Կցանկանայինք առանձնացնել նաեւ վարպետի խոսքերից մեկը, որը իր գրքերից մեկում է գրել. « Տեր Աստված, հոգիս չառած՝ խելքս չառնես»:

Փառք Աստծո, որ վարպետն ապրեց մինչեւ վերջ առողջ բանականությամբ, խելքով, իմաստությամբ:

Տարիներ շարունակ վարպետի երազանքն էր, որ իր թատրոնը տանիք ունենա, սակայն ցավոք այդպես էլ չտեսավ իր երազած թատրոնի շենքը: Տեսնես այն ճարտարապետները, որոնք դեմ էին խոսում շենքի կառուցմանը, հիմա ի՞նչ են զգում...

Համազգային պետական թատրոնի տնօրենն «**Ազգի**» հետ զրույցում անդրադառնալով թատրոնի նոր շենքի կառուցմանը, որը Սոս Սարգսյանի երազանքն էր, ասաց. «Դրա մասին կարելի է գիրք գրել, քանի որ մենք միասին էինք աշխատում այդ հարցի շուրջ: Մահվան օրը, երբ ինձ կանչեց, իր վերջին գործնական հարցը շենքին էր վերաբերում: Դա իր նպատակն էր եւ է ու կարծում եմ, եթե իրագործվի, ապա Սոս Սարգսյանի դիմանկարը կամբողջականանա: Չեմ էլ ցանկանում կասկածի տակ առնել, հավատում եմ իրագործվելուն: Դրանով Սոս Սարգսյանն առավել հանգիստ կլինի: Վարպետի ցանկությունը շենքի հետ կապված այն էր, որ Երեւանում կառուցենք զուտ թատերական, թատրոնի համար նախատեսված շենք: Միշտ ցավով նշում էր, որ այսօր բոլոր թատրոնների շենքերը հարմարեցված, դարձված են թատրոնի համար, ոչ թե նպատակային են կառուցված: Վարպետը երազում էր դասական ոճով թատրոն ունենալ, իհարկե, ժամանակակից հարմարություններով ու միշտ ասում էր. «Համազգայինը վաստակել է ունենալ իր տանիքը, դա իմ հարցը չէ, ես իմ կյանքն ապրել եմ, դա թատրոնի հարցն է»: **Վարդան Մկրտչյանը** երեկ խոսելով Սոս Սարգսյանի մասին՝ չէր կարողանում անցյալ ժամանակով արտահայտվել. «Սոս Սարգսյանն ինքն իրենով լուսավոր մարդ է, իր տեսակով՝ պայծառ, մտածող: Երբ այդ անունը տալիս ես, մի տեսակ վեհություն, հպարտություն, ուրախություն է գալիս մեջդ: Հուշերը շատ շատ են եւ չեմ ցանկանում, որ դրանք հուշ դառնան, մենք պատրաստ չենք դրան, որ դա այլեւս հուշ է: Այժմ գիտակցությամբ հասկանում ենք, սակայն՝ էներգիայով դեռ չենք ցանկանում ընդունել, փոխանցել գալիքին: Այսօր պետք է միայն ափսոսալ, քանի որ վերջին մոհիկանն է գնում, մեր ժամանակների ամենամեծ հեղինակությունը: Թե հետո ի՞նչ կլինի, ով կգա այդ մակարդակի, դա հարց է: Երբ տան մեջ կա մեծը, նույնիսկ եթե այդքան էլ ակտիվ չէ, բայց կա, միշտ կարեւոր ու դժվար պահերին, անելանելի դրություններում ապավինում ես նրան, դա է ամենակարեւորը:

Մեծը, հենքը, ապավենը այլեւս չկա... »:

Վարպետի խաղընկերներից դերասան, Կամերային երաժշտական թատրոնի գեղարվեստական ղեկավար **Դավիթ Հակոբյանը** հիշեց Սոս Սարգսյանի հետ իր շփման երջանիկ տարիները. «Սոս Սարգսյանի հետ աշխատել եմ 1992-ից: Նա մեր բոլորի կյանքում էր միշտ, տեղյակ էր բոլորիս ցավերին ու դարդերին, նա գիտեր՝ այսօր դու հաց կերել ես, թե՝ ոչ, երեխադ ինչպես է, սովորում է, թե՝ ոչ: Ինքը շատ հողեղեն էր ու շատ բարձր. քիչ է հաջողվում, որ հարազատ հողին այդքան կպած լինես եւ այդքան մոտ լինես երկնքին»: Հետո ավելացրեց. «Նա հազվագյուտ երեւույթ էր, ինքն արդեն մարդ չէր, որին ասեին՝ այսինչյան այսինչ, նա Սոսն էր, մեր Սոսը: Գնաց աստղաբույլի մեջ իր տեղը գրավեց՝ Փափազի, Հրաչի, Ավետի, Խորիկի, Մհերի հետ»: Վերջում Դավիթ Հակոբյանը մաղթեց, որ մեր ժողովրդի արգանդն այնքան լեցուն լինի, որ մեծ անունների պակաս չունենանք:

Դ. Հակոբյանը Ս. Սարգսյանի հետ բեմում շատ է խաղացել. «Հզոր խաղընկեր էր, խաղընկեր չէր, որը քեզ խեղճացնում է, այլ՝ ֆուտբոլի լեզվով ասած՝ «պաս տվող»: Գիտեր ո՛ր պահին քեզ «պաս տա» եւ հետ ստանա»:

Միասին անցկացրած բեմական գործունեությունից Դ. Հակոբյանը հիշեց հետաքրքրական դրվագ. «Լիր արքա» ենք խաղացել միասին. ռիտուալ էինք սարքել՝ ես ծաղրածուն էի, ինքը՝ Լիր արքան: Սոսը ձեռքը դնում էր դաստակիս եւ ասում՝ գնանք բեմ: Ու այդպես միասին բեմ էինք բարձրանում: Ու քանի որ մեծ էր արդեն, մթության մեջ դժվար էր կողմնորոշվում, ես իրեն ուղեկցում եւ տանում էի այնտեղ, որտեղ պետք է պառկեր: Մի օր հանկարծ ինչ-որ բան ընկավ կոշիկիս շղթային, ասացի՝ սպասեք, սպասեք, բայց չլսեց, գնաց: Մինչեւ շղթան պոկեցի, հասա բեմ, արքա Լիրը գոռում է. «Դավո՞, Դավո՞, Դավո՞»: Կուլիսում բոլորը ծիծաղում էին: Եկա, ասացի՝ այստեղ եմ, սուս, արդեն այստեղ եմ: Հիմա ես իրեն պետք է պառկեցնեի եւ հենց լույսերը վառվեին՝ ասաց. «Դատելու եմ աղջիկներիս, դատելու եմ»: Չհասցրի նրան պառկեցնել եւ մի ոտքը ծուռ, նստարանին հենված, անհամար դիրքով Յուրան լույսերը միացրեց, Սոսը մնացել էր նստած: Ու հենց լույսը վառվեց, մի քիչ տագնապի մեջ, աչքերը չռված, շունչը տեղը բերեց ու ասաց՝ «Դատելո՞ւ եմ, դատելու աղջիկներիս»: Ոչ ոք ոչինչ չզգաց... Հաջորդ օրը... Հաջորդ օրն ամեն ինչ նորմալ ընթացավ, ես իրեն տարա բեմ եւ պառկեցրի, սակայն, երբ լույսերը վառվեցին, նա կրկին կիսանստած էր, անցյալ օրվա դիրքով: Փաստորեն, նրան դուր էր եկել երեկվա էդ վիճակը եւ որոշել էր փոխել տեսարանը» (Դավիթ Հակոբյանի կենդանի մեկնաբանությամբ, իհարկե, այս ամենն ավելի զվարճալի էր):

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր **Արմեն Մազմանյանն** էլ «**Ազգի**» հետ զրույցում հիշեց Սոս Սարգսյանից իրեն թողած պատգամը. «Երբ ինձ հրավիրեց Թատերական ինստիտուտ դասավանդելու՝ 15-16 տարի առաջ, ժողովրդականի կոչում ունեցող շատ-շատերը նրան խորհուրդ էին տալիս ինձ չընդունել, քանի որ ասում էին, թե ես խուլիգան եմ, խայտառակ, անգրագետ, ապաշնորհ, ալկոհոլասեր (միայն հոմոսեքսուալիստ չկարողացան ինձ անվանել): Վարպետը անտեսելով այդ ամենը, ասաց. «Այ տղա, էդ ինչի քեզ էդքան չեն սիրում, արի հլը», եւ ընդունեց աշխատանքի: Նա ուզում էր այս քանդված ինստիտուտը հետ բերել եւ սարքել Հայ ազգային արվեստի համալսարան: Կարծես թե ճակատագրի բերումով դա էլ ինձ մնաց պատգամ՝ շարունակել իր սկսած գործը, քանի որ իր ժամանակվանից այս բուհը կյանքի նշույլներ արձակեց: Այդ պատգամը պիտի փորձեմ կատարել, որ կատարվի Սոս Սարգսյանի երազանքը՝Հայաստանն ունենա ազգային արվեստների համալսարան»:

Ա. Մազմանյանը ցավով նշեց, որ չկա մեկը, որը կփոխարինի Վարպետին իր արժեքով, տեսակով, քաղաքացիական կեցվածքով, շնորհով ու իր թողած հետքով:

Թատերականի ռեկտորն ուրախությամբ նշեց, որ Սոս Սարգսյանը կյանքի վերջին տարիներին բավականին հետաքրքրական գրքեր հրատարակեց, որոնք կարծես խորհուրդներ էին եկող սերնդին՝ դաժանության, չորության, ցինիզմի փոխարեն վարպետն առաջարկում էր պարզագույն դեղատոմս՝ մարդկայնություն: Նա մինչեւ իր վերջին օրը մնաց այդպիսին. «Ինձ համար անձամբ նաեւ կորուստ էր, քանի որ վարպետը մեր կառավարման խորհրդի նախագահն էր: Եթե նա ոչինչ չաներ էլ, շաբաթը մեկ գալիս էր, հինգ րոպե աշխարհի լավ ու վատից զրուցում էինք, ու դա շատ բան էր տալիս ինձ: Կորուստները միանգամից չեն գնահատվում. ինչ-որ ժամանակ կանցնի եւ նոր միայն մենք կզգանք նրա բացակայության իմաստն ու նրա նմանների կարիքը մեր կյանքում: Հաստատապես մահացավ 20-րդ դարի մեծագույն արտիստներից մեկը, որով կարող էր պարծենալ ամեն ազգ: Երկակի է ողբերգությունը. բացի մարդկային կորստից, նա իրենով փակեց մի ահռելի մեծ էջ, որի լուսանցքում մեծացել եմ նաեւ ես»:

Մազմանյանը բարկացած ընդգծեց, որ վարպետից հետո եկող իր գործընկերներն ընդամենը զբաղված են գզվռտելով, աթոռ, մեդալ, պաշտոն իրարից խլելով: Իսկ Սոս Սարգսյանը դրա համար չի կռվել, նա դրա պատճառով չէր, որ չէր քնում գիշերը, այլ՝ քանի որ ասելու, զգալու, ապրելու բան ուներ:

«**Ազգի**» հետ վերջին հանդիպմանը վարպետը երիտասարդներին խորհուրդ տվեց. «Այն կյանքը, որ մենք ենք տեսել, մոտավորապես հարյուր անգամ ավելի ծանր էր, դաժան, քան՝ այսօրվանը: Չեմ կարծում, որ այսօր առանց ոտնաման մարդ լինի: Մենք՝ հին սերունդը, հաղթահարել է՛լ սով, է՛լ մերկություն՝ առանց վերարկու եւ գլխարկ: Այսօրվա կյանքը չի կարելի նույնիսկ համեմատել այդ տարիների հետ: Այդ հոգսերը չունենալով հիմիկվա սերունդը պետք է զբաղվի պետականաշինությամբ, հասարակության կազմավորմամբ»:

Հենց այս պատգամը, խորհուրդը պետք է յուրաքանչյուրիս ուղեկցի ու դառնա կյանքի նպատակ:

Հեռացավ մեզնից մեր Արտաշեսը, Մանասը, Մկրտիչը, Զամբախովը, Հայրապետը, Բեն Ալեքսանդրը, Նահապետը... Մտավորական, ազգի ու պետության մասին մտածող իսկական մտավորական եւ արտիստ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Կարեն Գրիգորյանն արժանացավ բրոնզե մեդալի



Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում ավարտվեց նաեւ արագ շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունը: Եթե կայծակնային խաղում Հայաստանի ներկայացուցիչները մեկական ոսկե եւ բրոնզե մեդալ էին նվաճել, ապա արագ շախմատի մրցաշարում հանդես եկած մեր 7 շախմատիստներից Կարեն Գրիգորյանը դարձավ 3-րդ մրցանակակիր: Կարենը 9 հնարավորից վաստակեց 6,5 միավոր՝ լրացուցիչ գործակիցներով զիջելով արծաթե մեդալակիր, ռուսաստանցի Դարսեն Սանժաեւին: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Գրիգորյանը հաղթեց Եվգենի Բիդային, Լարս Ռինդլիսբախերին, Ագո Տոմինգային, Վասիլի Կորչմարին, Միհրան Օհանյանին եւ Մաքսիմ Լուգովսկոյին, ոչ-ոքի խաղաց Վլադիմիր Ֆեդոսեեւի հետ, պարտվեց Դարսեն Սանժաեւին ու Գեորգ Աբոզենկոյին:

Գրիգորյանից հետո լավագույն արդյունքը ցույց տվեց մինչեւ 14 տարեկանների մրցաշարի մասնակից Կոնստանտին Յայլոյանը, որը 9 հնարավորից վաստակած 6 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը:

Յայլոյանը շատ հաջող սկսեց մրցաշարը՝ տոնելով 4 անընդմեջ հաղթանակ Անդրեյ-Թեոդոր Դոլանայի, Տոնի Լազոնի, Հայկ Մարտիրոսյանի եւ Եգոր Կովալյովի նկատմամբ: 5-րդ տուրում նրա հաղթարշավը կանգնեցրեց մրցաշարում 7 միավորով 2-րդ տեղը զբաղեցրած ռուսաստանցի շախմատիստ Թիմուր Տրուբչանինովը: Հաջորդ տուրում հայ շախմատիստը կրկին հաղթանակ տոնեց՝ առավելության հասնելով բուլղարացի Վլադիմիր Պետրովի նկատմամբ: Իսկ ահա ավարտական 3 տուրերում նա ընդամենը 1 միավոր վաստակեց՝ հաշտություն կնքելով Դավիթ Արկուշիի եւ Իլյա Չեկլեցովի հետ, պարտվելով բելառուս Միխայիլ Նիկիտենկոյին: 9-րդ տուրում կրած հենց այդ պարտությունն էլ Յայլոյանին զրկեց մեդալից:

Տարիքային այս խմբում Հայաստանի 2-րդ ներկայացուցիչ Հայկ Մարտիրոսյանը, որը կայծակնային խաղում գերազանց ելույթ էր ունեցել՝ նվաճելով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, 5 միավորով զբաղեցրեց 12-րդ տեղը: Իսկ չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Եգոր Կովալյովը, որը վաստակեց 7 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ նույնպիսի արդյունքի հասած իր հայրենակից Թիմուր Տրուբչանինովից: Բրոնզե մեդալը նվաճեց ռումինացի Անդրեյ-Թեոդոր Դոլանան:

Մինչեւ 12 տարեկան պատանիների մրցաշարում Շանթ Սարգսյանը 5,5 միավորով գրավեց 8-րդ տեղը: Իսկ Արթուր Դավթյանը 3,5 միավորով 23-րդն էր: Չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Թիմուր Ֆախրուտդինովը, որը վաստակեց 8 միավոր:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում վարպետության թեկնածու Մանուել Պետրոսյանը 4,5 միավորով զբաղեցրեց 12-րդ տեղը: Ոսկե մեդալին արժանացավ լիտվացի Տիտաս Ստրեմավիչյուսը, որը վաստակեց 7 միավոր:

Աղջիկների մրցաշարում Հայաստանից միայն Սոնա Ասատրյանը մասնակցեց արագ շախմատի Եվրոպայի առաջնությանը՝ հանդես գալով մինչեւ 14 տարեկանների մրցաշարում: Սոնան 5 միավորով 7-րդ տեղը զբաղեցրեց: Չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց էստոնացի Մայի Նարվան, որի հաշվին 6,5 միավոր գրանցվեց:

Այժմ պատանիները կվիճարկեն դասական շախմատի Եվրոպայի առաջնության պարգեւները:

# Չիգորինի հուշամրցաշարում Հայաստանը կներկայացնեն 6 շախմատիստներ

**Հոկտեմբերի 4-13-ը Սանկտ Պետերբուրգում կանցկացվի ռուս հանրահայտ շախմատիստ Միխայիլ Չիգորինի 20-րդ հուշամրցաշարը: Մրցումներին հայտավորված 173 շախմատիստների թվում են նաեւ Հայաստանի 6 ներկայացուցիչներ՝ գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանը, Զավեն Անդրեասյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, ՖԻԴԵ-ի վարպետներ Վահե Բաղդասարյանը, Տիգրան Սիմոնյանն ու Աննա Հայրապետյանը:**

**Վլադիմիր Հակոբյանն իր վարկանիշով (2691) 4-րդն է մասնակիցների մեջ: 42-ամյա Հակոբյանն իր վարկանիշով զիջում է միայն ռուսաստանցի Եվգենի Ալեքսեեւին (2710) եւ ուկրաինացիներ Ալեքսանդր Արեշչենկոյին (2709) ու Պավել Էլյանովին (2706): Զավեն Անդրեասյանն իր վարկանիշով (2631) 12-րդ տեղում է:**

**Սկզբում շախմատիստներն իրենց կարողությունները կփորձեն կայծակնային խաղում, ապա կանցկացվի դասական շախմատի մրցաշարը:**

**Բացի հայաստանցի շախմատիստներից, մրցաշարի մասնակիցների թվում են նաեւ Ռուսաստանը ներկայացնող հայ շախմատիստներ Արթուր Գաբրիելյանը, Նիկիտա Մատինյանը, Դավիթ Պառավյանն ու Տիգրան Նազարեթյանը:**

# Ռաֆայել Մարկեսը հեռանում է ռինգից

**Քաշային 2 կարգերում պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի նախկին չեմպիոն, 38-ամյա մեքսիկացի Ռաֆայել Մարկեսը հայտարարել է ռինգին հրաժեշտ տալու մասին: Այս տարվա սեպտեմբերի սկզբին Մարկեսն ամերիկացի Էֆրաին Էսկիվիասի հետ մենամարտում նոկաուտի էր ենթարկվել:**

**Բռնցքամարտիկի կարիերան Մարկեսը սկսել էր 18 տարի առաջ՝ 1995-ի սեպտեմբերին: Առաջին գոտեմարտում նրա մրցակիցը թեթեւագույնքաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Վիկտոր Ռաբանալեսն էր: Մարկեսը 8-րդ ռաունդում նոկաուտի ենթարկվեց: Հետագայում նա եւս 2 անգամ ժամկետից շուտ ավարտեց մենամարտը՝ ռինգը թողնելով պարտված: Իսկ ահա 2003-**



**2006-ին Մարկեսը թեթեւագույնքաշային կարգում անպարտելի էր:**

**Նա աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար 8 մենամարտ անցկացրեց ու բոլորում էլ հաղթեց, ընդ որում 6-ն ավարտեց ժամանակից շուտ:**

**2007-ի մարտին նա տեղափոխվեց քաշային հաջորդ կարգ եւ իսկույն նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ հաղթելով WBC-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր, մեքսիկացի Իսրայել Վասկեսին: Վերջինիս հետ Մարկեսը 4 մենամարտ անցկացրեց, որից 2-ում հաղթեց:**

**Պրոֆեսիոնալ ռինգում Ռաֆայել Մարկեսը 50 մենամարտ է անցկացրել, որից 41-ում հաղթել է: Բռնցքամարտի մասնագետների կարծիքով, 5 տարի անց Մարկեսն արժանի կլինի Փառքի սրահում ընդգրկվելուն:**



ՖՈՒՏԲՈԼ

# Մովսիսյանը մոտ է Ավալյանի ցուցանիշը գերազանցելուն



**ՌԴ նախորդ առաջնության լավագույն ռմբարկուներից մեկը՝ Յուրա Մովսիսյանը Մոսկվայի «Սպարտակում» էլ արդյունավետ խաղ է ցուցադրում: Առաջնության 10-րդ տուրից հետո Մովսիսյանը 5 գնդակով լավագույն ռմբարկուների ցանկում է, որը 7 գոլով գլխավորում է «Ռոստովի» հարձակվող Արտյոմ Ձյուբան:**

**Յուրա Մովսիսյանը 2011-ից է հանդես գալիս Ռուսաստանում եւ այդ երկրի առաջնություններում ընդհանուր առմամբ արդեն 32 գնդակ է խփել: Այս ցուցանիշը 2-րդն է ՌԴ առաջնություններում հանդես եկած հայ ֆուտբոլիստների շրջանում: Առայժմ ամենաարդյունավետը ՀՀ հավաքականի նախկին հարձակվող Գառնիկ Ավալյանն է, որը «Կռիլյա Սովետովի» կազմում 1993-1998-ին անցկացրած 187 խաղում 28 գոլ է խփել, 6 գնդակ էլ իր օգտին է գրանցել 1999-2000-ին Էլիստայի «Ուրալանում» խաղալիս: Այնպես որ Յուրա Մովսիսյանին ընդամենը 3 գոլ է անհրաժեշտ Ռուսաստանի առաջնություններում հայ լավագույն ռմբարկուի տիտղոսին արժանանալու համար:**

**20 գոլի հեղինակ է դարձել Անդրեյ Մովսիսյանը, 13 գոլ է խփել Ալբերտ Սարգսյանը: Արաս Օզբիլիսի հաշվին 12 գոլ է գրանցված:**

**Յուրա Մովսիսյանն առայժմ առավել արդյունավետ է գործել 2011/12-ի մրցաշրջանում՝ «Կրասնոդարի» կազմում անցկացրած 37 հանդիպումներում խփելով 14 գնդակ: Հաջորդ մրցաշրջանում նա 13 գոլի հեղինակ դարձավ, որից 9-ը խփեց «Կրասնոդարում», 4-ը՝ «Սպարտակում»:**

# Արեւիկ Պատիկյանը զբաղեցրեց նախավերջին տեղը

**Տալլինում ընթացող ծանրամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնության հերթական օրը մրցահարթակ դուրս եկավ Հայաստանի ներկայացուցիչ Արեւիկ Պատիկյանը: Մինչեւ 20 տարեկան աղջիկների 69 կգ քաշայինների մրցավեճում Արեւիկը թույլ ելույթ ունեցավ՝ երկամարտի 178 կգ (79+99) արդյունքով 7 մասնակիցների մեջ գրավելով 6-րդ տեղը:**

**Պոկում վարժությունում նա 2 մոտեցում հաջող կատարեց՝ բարձրացնելով 75 եւ 79 կգ: Հրում վարժությունում էլ առաջին 2 փորձերից իրեն ենթարկելով 94 եւ 99 կգ-անոց ծանրաձողերը, Արեւիկը 3-րդ մոտեցման ժամանակ ձախողվեց 105 կգ-ը բարձրացնելիս:**

**Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Մարինա Կանեւան, որը երկամարտում ցույց տվեց 213 կգ (93+120) արդյունք: 2-րդ տեղը գրավեց մոլդովացի Եկատերինա Տրետյակովան՝ 203 կգ (90+113): Բրոնզե մեդալակիր դարձավ Թուրքիայի ներկայացուցիչ Սումեյե Կենտլին՝ երկամարտում ցույց տալով 200 կգ (86+114) արդյունք:**

**Մինչեւ 23 տարեկան ծանրորդների մրցավեճում Հոլանդիան ներկայացնող Կարեն Թովմասյանը 85 կգ քաշայինների մրցապայքարում երկամարտի 327 կգ (149+178) արդյունքով գրավեց 7-րդ տեղը: Չեմպիոնի տիտղոսը նվաճեց լեհ Կրժիժտոֆ Զվարիչը, որը հաղթող ճանաչվեց երկամարտի 356 կգ (161+195) արդյունքով: 2-րդ մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Ալբերտ Սայախովը՝ 349 կգ (155+194): Բրոնզե մեդալին արժանացավ նույնպիսի արդյունքի հասած ռուսաստանցի մեկ այլ ծանրորդ՝ Վիկտոր Խարչենկոն, որը Սայախովից անձնական քաշով 400 գրամով ծանր էր:**

**Այսօր Եվրոպայի առաջնությունը կհատի վերջնագիծը: Հայաստանից մրցահարթակ դուրս կգան գերծանրքաշայիններ Հայկ Հակոբյանն ու Հրաչ Ղարիբյանը, որոնք կմասնակցեն մինչեւ 23 տարեկանների մրցապայքարին: Հայկ Հակոբյանը մրցումների զգալի փորձ ունի եւ նրանից մեդալի ակնկալիքներ կան:**

# Միակ գոլը հաղթանակ պարգեւեց «Գանձասարին»

Երեկ «Գանձասար»-«Ուլիս» հանդիպումով մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 7-րդ տուրը, որով կավարտվի մրցաշարի առաջին շրջանը: Խաղասկիզբը հաջող էր դաշտի տերերի համար: Արդեն 9-րդ րոպեին առաջնության լավագույն ռմբարկու Արտակ Դաշյանը բացեց հաշիվը: Առաջին խաղակեսի ավարտին «Գանձասարը» կարող էր կրկնապատկել հաշիվը, սակայն Նարեկ Բեգլարյանը չիրացրեց 11 մ հարվածը: 2-րդ խաղակեսում հաշիվը չփոփոխվեց: «Գանձասարը» հաղթեց 1-0 հաշվով եւ 11 միավորով տեղափոխվեց 3-րդ հորիզոնական:

Այսօր կկայանա տուրի կենտրոնական՝ «Փյունիկ»-«Արարատ» հանդիպումը ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտում, իսկ «Միկան» կհյուրընկալի «Շիրակին»: Վաղը կմրցեն «Բանանցն» ու «Ալաշկերտը»:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ Օրվա հետքերով

# Ե՞րբ կունենանք 1 մլն զբոսաշրջիկ եւ ի՞նչ պետք է անենք դրա համար

## Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը վերջին տասնամյակում

Էկոնոմիկայի նախարարության ստացած հաշվետվությունների տվյալների եւ հետազոտությունների հիման վրա ձեւավորված գնահատականների համաձայն՝ 2013-ի հունվար-հունիսին Հայաստան են ժամանել 321 279 զբոսաշրջիկներ, կամ 2012-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 14,3 տոկոս: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ զբոսաշրջության համար առավել նպաստավոր է համարվում տարվա երկրորդ կեսը, ինչպես նաեւ վերջին 11 տարիների ցուցանիշները, մեծ է հավանականությունը, որ տարվա կտրվածքով 2013-ին Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը ոչ միայն կգերազանցի 900 հազարը, այլեւ ընդհուպ կմոտենա 1 մլն-ին, իսկ 1 մլն-րդ զբոսաշրջիկի սահմանը կհատենք 2014-ին:

Զբոսաշրջության համաշխարհային օրվա առիթով ներկայացնենք, թե ինչպես է փոխվել Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը վերջին 11 տարում: Համեմատելով Հայաստան այցելող զբոսաշրջիկների ցուցանիշը, տեսնում ենք, որ 2002-ի համեմատ 2012-ին այդ թիվն աճել է մոտ 5 անգամ՝ 162 հազարից հասնելով 843 հազարի: Ընդհանրապես 2002-ից մինչեւ 2005-2006 թվականները այդ թիվն աճել է բավականին արագ տեմպերով: 2005-ին կազմել էր 318 հազար, կրկնակի ավելանալով 2002-ի համեմատ, իսկ 2006-ին հասել 381 հազարի: Հաջորդ տարի՝ 2007-ին Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվն ավելի կտրուկ աճեց՝ մեկ երրորդով եւ կազմեց 510 հազար: 2008-ին աճեց եւս մոտ 10 տոկոսով, հասնելով 558 հազարի, իսկ ահա 2009-ին աճի տեմպը զգալիորեն նվազեց: Այդ ճգնաժամային տարում Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվն, այնուամենայնիվ, փոքր աճ ունեցավ եւ կազմեց 575 հազար:

Ի տարբերություն մեր տնտեսության այլ ճյուղերի՝ զբոսաշրջությունը, փաստորեն, ավելի քիչ կորուստներ կրեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքով: Այն նաեւ ավելի արագ վերականգնեց աճի տեմպը, եւ արդեն 2010-ին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվն ավելացավ մոտ 100 հազարով եւ կազմեց 683 հազար: 2011-ին հասավ 757 հազարի եւ 2012-ին, ինչպես արդեն նշեցինք՝ 843 հազարի:

Ներկայացնելով այս ցուցանիշները, հեռու ենք մնում այն մտքից, թե Հայաստանի կառավարությանն այլեւս անելիք չի մնում այս ոլորտում: Ընդհակառակը, չնայած արված քայլերին, դեռեւս մնում է ճանապարհների, զբոսաշրջային վայրերում կոմունալ հարմարությունների բացակայության եւ մի շարք այլ հարցերի լուծումը: Հյուրանոցների եւ զբոսաշրջային բիզնեսում ընդգրկված գործարարների կողմից էլ դեռեւս չկա իրենց ծառայությունների համար առավել մրցունակ գներ կիրառելու գիտակցումը: Թեեւ այդ ծառայությունների գների իջեցման քայլեր որոշ հյուրանոցներ եւ հանգստյան տներ սկսել են անել, բայց դա դեռ բավարար չէ, որ խոսենք նրանց ընդհանուր մտայնության փոխվելու մասին: Անելիքներ ունենք նաեւ մենք բոլորս՝ մեր հասարակությունը:

Չի կարելի արհամարհանքով կամ զզվանքով վերաբերվել այլ կրոնի, աչքերի ձեւի կամ մաշկի գույնի զբոսաշրջիկներին, ծիծաղել նրանց վրա կամ նրանց համար վաճառվող ապրանքի կամ մատուցվող ծառայության գինը մի քանի անգամ բարձր ասել: Սրանք գուցե մանրուքներ թվան, բայց կարող են ստեղծել որոշակի բացասական պատկերացումներ մեր ժողովրդի եւ երկրի մասին, ազդելով զբոսաշրջիկների հոսքի վրա: Իսկ որ ներգնա զբոսաշրջությունը անմիջական գումարների հոսք է բերում երկրին, անմիջականորեն նպաստում այդ ոլորտում գործող ընկերությունների եւ աշխատող մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը, անկասկած է: Հետեւաբար եւ մոտեցումն էլ զբոսաշրջիկների նկատմամբ պետք է համարժեք լինի՝ ինչպես ընդունված է զբոսաշրջությամբ համաշխարհային ճանաչում ունեցող երկրներում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հայաստանում եւ Հայիթիում անտառները վերականգնելու կոչ

Վաշինգտոնից Ամերիկայի հայ ազգային (Հայ դատի) կոմիտեի հաղորդագրությունը տեղեկացնում է, որ Մ. Նահանգների Սենատի մեծամասնական խմբակցության առաջնորդի տեղակալ Ռիչարդ Դուրբինը (դեմոկրատ Իլինոյսից) սեպտեմբերի 25-ին Սենատի քննարկմանն է ներկայացրել մի օրինագիծ, որով պահանջում է շտապ կարգով դադարեցնել անտառահատումները Հայաստանում ու Հայիթիում եւ այդ երկրներում գտնվող անտառները հասցնել իրենց բնական՝ նախաիննսունական թվերի վիճակին: Օրինագիծը նախատեսում է բարելավել անտառների կառավարումը, խթանել համագործակցությունը երկու երկրների համապատասխան նախարարությունների եւ առանձին կազմակերպությունների միջեւ, մշակել կարճաժամկետ եւ երկարաժամկետ կատարողական ծրագրեր անտառների հետագա պահպանումը ամուր հիմքերի վրա դնելու համար:




Ենթադրվում է «մեր պարտքը բնությանը» նշանաբանի ներքո ստեղծել ոչ կառավարական մի հանձնախումբ, որը բանակցություններ կվարի երկու երկրների կառավարությունների եւ միջազգային վարկատու կազմակերպությունների հետ՝ բարելավելու անտառածածկ տարածքների վիճակը Հայաստանում եւ Հայիթիում:

Հայ դատի կոմիտեն ողջունել է Դուրբինի նախաձեռնությունը:

Հ. Ծ.

ՀԱՄԱՌՈՏ

## Գուրգեն Մարգարյանի կիսանդրի-հուշարձանի բացում

Այսօր՝ժամը 11:00-ին Լենինգրադյան 52 շենքի հարակից այգում կբացվի հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի կիսանդրի-հուշարձանը:

Նա դավադրաբար կացնահարվել էր 2004 թ. փետրվարի 19-ին ադրբեջանցի սպայի կողմից Բուդապեշտում ՆԱՏՕ-ի «Գործընկերության հանուն խաղաղության» ծրագրի անգլերեն եռամսյա դասընթացի ժամանակ:

## Վախճանվել է անվանի երաժշտագետ Արաքսի Սարյանը

Սեպտեմբերի 26-ին, կյանքի 76-րդ տարում վախճանվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Արաքսի Արծրունու Սարյանը:

## Գյումրիում էր Ղազախստանի դեսպանը

Իրար հետ ընդհանուր սահման չունեցող Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ տնտեսական համագործակցությունը ոչ այնքան ակտիվ է զարգանում, քանի որ չկա տրանսպորտային ուղիղ հաղորդակցություն: Եթե Աբխազիայով երկաթուղային միջանցք բացվի, ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջեւ կտրուկ կաճի: Երեկ Գյումրու մանկավարժական ինստիտուտում եվրասիական ինտեգրացիայի զարգացման խնդիրներին նվիրված գիտաժողովին մասնակցելուց հետո այս մասին լրագրողներին ասել է մեր երկրում Ղազախստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Այիմդոս Բոզժիգիտովը:

Դեսպանի գնահատմամբ, Մաքսային միության անդամ համարվող Ղազախստանը կարող է զարգացնել Հայաստանին հացահատիկի, մետաղագործական, քիմիական արդյունաբերության եւ այլ ապրանքների մատակարարումը, իսկ Հայաստանից կարող են Ղազախստան արտահանվել, մասնավորապես, շինարարական հարդարման նյութեր, քարեր, թանկարժեք քարեր:

Գյումրի այցի շրջանակներում Ղազախստանի դեսպանին ընդունել է Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը: Ողջունելով հյուրին, մարզպետը նրան ներկայացրել է Շիրակի մարզն ու այստեղ առկա խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ կատարված աշխատանքն ու անելիքները:

«Վերջին 20 տարիներին,- , մարզպետին շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, ասել է դեսպան Բոզժիգիտովը,- Հայաստանին եւ Ղազախստանին հաջողվել է բարեկամական հարաբերությունների բարձր մակարդակ հաստատել: Ես ուրախ եմ, որ հիմա արդեն կարող ենք խոսել նաեւ միջմարզային մակարդակով փոխգործակցության մասին»:

Գ. Մ.

**ՇՏԱՊ վաճառվում կամ վարձով է տրվում**

քարե ավտոտնակ ՀԱԹ Բ-4 թաղ.-ում, առանց միջնորդի
Հեռ.՝ 077-06-28-48, 055-06-28-48

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հուշադրամների էսքիզների ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետեւ՝ ՀՀ ԿԲ) հայտարարում է հրապարակային մրցույթ՝

1. **«Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ»,**
2. **«Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակ»,**
3. **«Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելից»**
4. **«Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակ»**

հուշադրամների էսքիզների ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի 6 հասցեով:

Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2013 թ. նոյեմբերի 28-ը, ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2013 թ. դեկտեմբերի 2-ը, ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման օրն ու ժամն է 2013 թ. դեկտեմբերի 9-ը, ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում (www.cba.am):

Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԿԲ-ի Դրամաշրջանառության կարգավորման վարչություն:

Հեռ.՝ +374 10 59 29 05, 59 29 43
Ֆաքս՝ +374 10 56 74 23, +374 10 52 38 52
Էլ. փոստ՝ lusine.ayvazyan@cba.am, nune.teryan@cba.am

ՀՀ ԿԲ հասարակության հետ կապերի ծառայություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 27.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: